«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական
կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա._____
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ դասախոս Բայանդուրյան Հ.Հ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեությունում

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

<u>Դասընթացի անոտացիան</u>

«**Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեությունում**» դասընթացը ժամանակակից իրավաբանի մասնագիտական պատրաստվածության կարևոր բաղադրիչներից է, որի ուսումնասիրությունը նպատակաուղղված է իրավաբանական գործունեության ընթացքում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման վերաբերյալ տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ձևավորմանը:

Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են տեղեկատվական հասարակության և թվային փոխակերպման հիմնական սկզբունքները, տեղեկատվական համակարգերի և իրավական տեղեկատվական ռեսուրսների կիրառման առանձնահատկությունները, էլեկտրոնային կառավարման և էլեկտրոնային արդարադատության համակարգերը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, էլեկտրոնային ստորագրությունը, թվային ապացույցների հավաքման, պահպանման և գնահատման առանձնահատկությունները, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության և տեղեկատվական անվտանգության իրավական ու կազմակերպական հիմունքները:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում արհեստական բանականության (Artificial Intelligence), LegalTech տեխնոլոգիաների, ամպային ծառայությունների, իրավական տվյալների շտեմարանների և թվային հարթակների կիրառմանը՝ իրավաբանական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով: Դասընթացի ընթացքում ուսանողները ձեռք են բերում իրավական տեղեկատվության որոնման, մշակման, վերլուծության, թվային գործիքների կիրառման և ժամանակակից տեղեկատվական միջավայրում մասնագիտական խնդիրների լուծման գործնական կարողություններ:

Դասընթացը համատեղում է տեսական և գործնական ուսուցումը՝ նպաստելով ապագա իրավաբանների թվային իրավագիտակցության, տեղեկատվական մշակույթի, տեխնոլոգիական մտածողության և մասնագիտական մրցունակության զարգացմանը՝ իրավական հարաբերությունների շարունակական թվայնացման պայմաններում:

<u>Դասընթացի նպատակը և խնդիրները</u>

Դասընթացի նպատակը՝

«**Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեությունում**» դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ժամանակակից տեղեկատվական և թվային տեխնոլոգիաների վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, ինչպես նաև իրավաբանական գործունեության ընթացքում դրանց արդյունավետ, անվտանգ և իրավաչափ կիրառման գործնական հմտություններ:

Դասընթացի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում գիտելիքներ տեղեկատվական համակարգերի, իրավական տեղեկատվական ռեսուրսների, էլեկտրոնային կառավարման, էլեկտրոնային արդարադատության, թվային ապացույցների, տվյալների պաշտպանության, կիբեռանվտանգության և արհեստական բանականության կիրառման վերաբերյալ: Միաժամանակ ձևավորվում են տեղեկատվության որոնման, մշակման, պահպանման, վերլուծության և իրավական խնդիրների լուծման համար ժամանակակից թվային գործիքների օգտագործման կարողություններ:

Դասընթացի նպատակն է նաև նպաստել ապագա իրավաբանների թվային իրավագիտակցության, տեխնոլոգիական մտածողության և նորարարական մոտեցումների զարգացմանը՝ ապահովելով նրանց պատրաստվածությունը թվայնացված իրավական միջավայրում մասնագիտական գործունեություն իրականացնելու համար:

<u>Դասընթացի խնդիրները</u>

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսանողներին ներկայացնել տեղեկատվական հասարակության, թվային տնտեսության և տեղեկատվական տեխնոլոգիաների դերն ու նշանակությունը ժամանակակից իրավական համակարգում,
- ձևավորել գիտելիքներ իրավաբանական գործունեությունում կիրառվող տեղեկատվական համակարգերի, իրավական տվյալների բազաների և էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների կառուցվածքի, գործառույթների և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ,
- զարգացնել իրավական տեղեկատվության որոնման, հավաքագրման, մշակման, համակարգման, վերլուծության և օգտագործման գործնական հմտություններ,
- ծանոթացնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, էլեկտրոնային ստորագրության, էլեկտրոնային արդարադատության և թվային ապացույցների կիրառման իրավական և տեխնիկական հիմունքներին,
- ձևավորել գիտելիքներ անձնական տվյալների պաշտպանության, տեղեկատվական անվտանգության, կիբեռանվտանգության և տեղեկատվական ռիսկերի կառավարման ոլորտներում,
- ուսանողներին ներկայացնել արհեստական բանականության (Artificial Intelligence), LegalTech տեխնոլոգիաների և թվային հարթակների կիրառման հնարավորությունները իրավաբանական գործունեության տարբեր ոլորտներում,
- զարգացնել ժամանակակից ծրագրային միջոցների, ամպային տեխնոլոգիաների և գլոբալ տեղեկատվական ցանցերի կիրառման գործնական հմտություններ,
- ձևավորել թվային միջավայրում տեղեկատվության օրինական, էթիկական և պատասխանատու օգտագործման մշակույթ,

• զարգացնել իրավաբանական գործունեության ընթացքում տեղեկատվական համակարգերի արդյունավետ օգտագործման, թվային լուծումների ընտրության և նոր տեխնոլոգիաների ներդրման կարողություններ,

• նպաստել ապագա իրավաբանների մասնագիտական մրցունակության բարձրացմանը՝ պայմանավորված իրավաբանական գործունեության շարունակական թվայնացման և տեխնոլոգիական զարգացման պահանջներով:

<u>Դասընթացի օբյեկտը և առարկան</u>

«Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեությունում» դասընթացի ուսումնասիրության օբյեկտը իրավաբանական պատշաճ գործունեության համար անհրժեշտ սահմանադրական և օրենսդրական բազայի ուսումնասիրությունն է:

«Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեությունում» դասընթացի առարկան՝ իրավաբանական գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնասիրությունն է:

<u>Դասընթացի մուտքային պահանջները</u>

«Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեությունում» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի տեսությունից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքում ձևավորվում են այնպիսի գիտելիքներ, հմտություններ և կարողունակություններ, որոնք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) համապատասխան մակարդակի ուսումնառության վերջնարդյունքներին և ապահովում են ապագա իրավաբանի մասնագիտական գործունեության ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ, անվտանգ և իրավաչափ կիրառումը

Գիտելիքները

Դասընթացի յուրացման արդյունքում ուսանողը կիմանա՝

- տեղեկատվական տեխնոլոգիաների դերն ու նշանակությունը իրավաբանական գործունեության մեջ,
- իրավական տեղեկատվության որոնման, հավաքագրման, մշակման և պահպանման սկզբունքները,

- Հայաստանի Հանրապետության իրավական տեղեկատվական համակարգերի կառուցվածքը և կիրառման առանձնահատկությունները,
- տեղեկատվական անվտանգության և անձնական տվյալների պաշտպանության հիմնական սկզբունքները,
- էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և էլեկտրոնային ստորագրության իրավական հիմքերը,
- էլեկտրոնային արդարադատության և էլեկտրոնային կառավարման համակարգերի գործառույթները,
- արհեստական բանականության (AI) և LegalTech տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները իրավաբանական գործունեության մեջ,
- իրավական տեղեկատվության հիմնական էլեկտրոնային աղբյուրները և պետական տեղեկատվական հարթակները, այդ թվում՝
    - ՀՀ Սահմանադրական դատարանի պաշտոնական կայք՝ **www.concourt.am**,
    - ՀՀ դատական իշխանության տեղեկատվական համակարգ՝ **www.datalex.am**,
    - Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ (ARLIS)՝ **www.arlis.am**,
    - Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ՝ **www.e-request.am**,
    - ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստր՝ **www.e-register.am**,
    - e-gov պետական էլեկտրոնային ծառայությունների հարթակը և այլ պետական թվային տեղեկատվական համակարգեր:
    - քաղաքացիաիրավական փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային հարթակը՝ cabinet.armlex.am
    - վարչաիրավական փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային հարթակը՝ e-administrativecourt.am
    - քրեադատավարական փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային հարթակը՝e-criminal.am

Հմտությունները

Գիտելիքի կիրառման հմտությունները

Ուսանողը կկարողանա՝

- արդյունավետ որոնել, հավաքագրել և վերլուծել իրավական տեղեկատվությունը՝ օգտագործելով պետական և մասնավոր տեղեկատվական համակարգերը,
- կիրառել ARLIS, Datalex, Concourt և այլ իրավական տեղեկատվական ռեսուրսներ մասնագիտական խնդիրների լուծման նպատակով,
- մշակել և օգտագործել էլեկտրոնային իրավական փաստաթղթեր,
- կիրառել արհեստական բանականության և այլ թվային գործիքներ իրավական հետազոտությունների, փաստաթղթերի մշակման և իրավական վերլուծության ընթացքում,
- ապահովել տեղեկատվական անվտանգության և անձնական տվյալների պաշտպանության պահանջների պահպանումը,
- գնահատել իրավական տեղեկատվության հավաստիությունը, ամբողջականությունը և կիրառելիությունը:

Ընդհանրական իմացական հմտությունները

Ուսանողը կկարողանա՝

- գործնականում կիրառել ձեռք բերված գիտելիքները,
- իրականացնել իրավական տեղեկատվության որոնում, համադրում և վերլուծություն,

- կատարել վիճահարույց իրավական իրավիճակների իրավական և տեղեկատվական վերլուծություն,
- գնահատել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման իրավական և էթիկական խնդիրները,
- հիմնավորված եզրակացություններ կատարել իրավական տեղեկատվության հիման վրա,
- կիրառել քննադատական մտածողություն և ժամանակակից թվային գործիքներ մասնագիտական խնդիրների լուծման ընթացքում:

Կարողունակություններ

Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը

Ուսանողը կունենա կարողություն՝

- ինքնուրույն կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեության տարբեր ոլորտներում,
- ինքնուրույն յուրացնելու և կիրառելու իրավաբանական գործունեության մեջ ներդրվող նոր տեղեկատվական տեխնոլոգիաները,
- վերլուծելու նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկան և իրավական տեղեկատվության այլ աղբյուրները,
- գնահատելու իրավական տեղեկատվության արժանահավատությունը և իրավական նշանակությունը,
- պահպանելու տեղեկատվական անվտանգության, մասնագիտական էթիկայի և անձնական տվյալների պաշտպանության պահանջները,
- պատասխանատվությամբ օգտագործելու արհեստական բանականության և այլ թվային գործիքների արդյունքները,
- իրավական խնդիրների լուծման համար ընտրելու և հիմնավորելու առավել արդյունավետ տեղեկատվական տեխնոլոգիական լուծումները,
- շարունակաբար կատարելագործելու սեփական մասնագիտական և թվային կարողությունները՝ իրավաբանական գործունեության թվայնացման պայմաններում:

<u>Դասավանդման եղանակները և մեթոդները</u>

Դասավանդման գործընթացում կիրառվում են ժամանակակից, ուսանողակենտրոն և գործնական ուղղվածություն ունեցող մեթոդներ, այդ թվում՝

• **Դասախոսություն՝** տեսական նյութի, իրավական հասկացությունների, սկզբունքների, իրավական կարգավորումների և դրանց կիրառման առանձնահատկությունների ներկայացման նպատակով:

• **Ինտերակտիվ դասավանդման մեթոդներ՝** ուսանողների ակտիվ մասնակցության ապահովման, քննարկումների, հարցադրումների և վերլուծական մտածողության զարգացման նպատակով:

• **Սեմինար քննարկումներ՝** իրավական խնդիրների, նորմատիվ իրավական ակտերի, դատական պրակտիկայի և իրավակիրառական խնդիրների համատեղ վերլուծությամբ:

• **Գործնական պարապմունքներ (case study)՝** իրական և մոդելավորված իրավական իրավիճակների ուսումնասիրություն, իրավական դիրքորոշումների ձևավորում և խնդիրների լուծման հմտությունների զարգացում:

• **Դատական պրակտիկայի վերլուծության մեթոդ՝** ՀՀ դատարանների, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումների ուսումնասիրություն և քննարկում:

• **Իրավական տեղեկատվական համակարգերի կիրառմամբ ուսուցում՝** ARLIS, Datalex, Concourt, E-cadastre, E-register, E-request, E-gov, ArmLex և այլ էլեկտրոնային հարթակների միջոցով իրավական տեղեկատվության որոնման, վերլուծության և կիրառման հմտությունների ձևավորում:

• **Խմբային աշխատանքներ և նախագծային ուսուցում՝** իրավական խնդիրների համատեղ ուսումնասիրություն, իրավական փաստաթղթերի պատրաստում և ներկայացում:

• **Իրավական հետազոտության մեթոդներ՝** իրավական աղբյուրների որոնում, համեմատական-իրավական վերլուծություն, օրենսդրական փոփոխությունների ուսումնասիրություն և իրավական դիրքորոշումների հիմնավորում:

• **Ինքնուրույն աշխատանք՝** ուսանողների կողմից իրավական գրականության, օրենսդրության, դատական ակտերի և մասնագիտական այլ աղբյուրների ուսումնասիրման միջոցով:

• **Հարցադրումների և բանավեճի մեթոդ՝** իրավական հիմնավորումների, քննադատական մտածողության և մասնագիտական հաղորդակցության կարողությունների զարգացման նպատակով:

• **Թվային և հեռավար ուսուցման գործիքների կիրառում՝** էլեկտրոնային ուսումնական նյութերի, առցանց հարթակների և թվային ռեսուրսների օգտագործմամբ:

Այս մեթոդների համադրումը նպաստում է ոչ միայն տեսական գիտելիքների յուրացմանը, այլև իրավական խնդիրների ինքնուրույն վերլուծության, իրավական տեղեկատվության արդյունավետ օգտագործման և մասնագիտական գործնական կարողությունների ձևավորմանը:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

2.1. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2-րդ

ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	72
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	16
1.1.1.Դասախոսություններ	0
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	16
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	56
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	Ստուգարք

2.2. Առարկայի ծավալը՝ 72 ժամ, կրեդիտ՝ «2» ECTS:

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

№	Թեմայի անվանումը	Ընդամենը	Սեմինար / գործնական պարապմունք	Դասախոսություն
Թեմա 1.	Իրավական տեղեկատվության հասկացությունը, նշանակությունը և իրավական աղբյուրների համակարգը	2	2	
Թեմա 2.	ՀՀ իրավական տեղեկատվական համակարգերը և պաշտոնական էլեկտրոնային աղբյուրները (ARLIS, Datalex, Concourt, ArmLex և այլն)	2	2	
Թեմա 3.	Դատական տեղեկատվական համակարգերի կիրառումը իրավաբանի մասնագիտական գործունեության մեջ (Datalex, ՀՀ դատարանների պաշտոնական կայքեր, դատական ակտերի որոնում և վերլուծություն)	2	2	
Թեմա 4.	Պետական էլեկտրոնային ծառայությունների հարթակներ և դրանց	2	2	

	կիրառումը իրավաբանի գործունեության ընթացքում (e-gov, e-request, e-register, e-cadastre և այլն)			
Թեմա 5.	Իրավական տեղեկատվության որոնման, ընտրության և վերլուծության մեթոդներ	2	2	
Թեմա 6.	Իրավական տեղեկատվության կիրառումը դատավարական և այլ իրավական փաստաթղթերի պատրաստման գործընթացում	2	2	
Թեմա 7.	Դատական պրակտիկայի և միջազգային իրավական աղբյուրների օգտագործում (ՀՀ դատարանների, ՄԻԵԴ-ի որոշումներ, միջազգային պայմանագրեր)	2	2	
Թեմա 8.	Իրավաբանի թվային գործիքները, տեղեկատվական անվտանգությունը և էլեկտրոնային իրավական ծառայությունների կիրառումը	2	2	
	Ընդամենը	16	16	0

Դասընթացի ընդհանուր ծավալը՝ 72 ակադեմիական ժամ:

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Տեղեկատվական հասարակություն և իրավական գործունեության թվայնացում

Տեղեկատվական հասարակության ձևավորման էությունը և զարգացման հիմնական փուլերը: Տեղեկատվության դերը ժամանակակից հասարակական, տնտեսական և պետական կառավարման գործընթացներում: Թվայնացման գործընթացների ազդեցությունը իրավական համակարգի զարգացման վրա:

«Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավական գործունեությունում» դասընթացի առարկան, նպատակը և խնդիրները: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման նշանակությունը իրավաբանի մասնագիտական գործունեության մեջ: Իրավական գործունեության թվայնացման հիմնական ուղղությունները:

Պետական տեղեկատվական քաղաքականության նպատակները և սկզբունքները: Էլեկտրոնային կառավարման համակարգերի ձևավորումը և զարգացումը: Թվային հասարակության պայմաններում իրավաբանի դերի փոփոխությունը:

Դասընթացի կապը իրավագիտության այլ ճյուղերի՝ սահմանադրական իրավունք, վարչական իրավունք, քաղաքացիական իրավունք, քրեական իրավունք և տեղեկատվական իրավունք առարկաների հետ:

Թեմա 2. Տեղեկատվության իրավական բնույթը և տեղեկատվություն ստանալու իրավունքը

Տեղեկատվություն հասկացության իրավական բովանդակությունը: Տեղեկատվությունը որպես հասարակական հարաբերությունների և իրավական կարգավորման օբյեկտ:

Տեղեկատվության տեսակները և դասակարգումը՝

- հանրային և սահմանափակ հասանելիության տեղեկատվություն,
- պետական գաղտնիք պարունակող տեղեկատվություն,
- անձնական տվյալներ,
- մասնագիտական և առևտրային գաղտնիք:

Տեղեկատվության ազատության և տեղեկատվություն ստանալու իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը: Հանրային տեղեկատվության մատչելիության սկզբունքները:

Տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացման ընթացակարգերը: Իրավունքի սահմանափակումների իրավաչափ հիմքերը: Տեղեկատվության պաշտպանության և տեղեկատվության ազատության հավասարակշռությունը:

Տեղեկատվական իրավունքների պաշտպանության դատական և վարչական մեխանիզմները:

Թեմա 3. ՀՀ իրավական տեղեկատվական համակարգերը և էլեկտրոնային իրավական աղբյուրները (ARLIS, Datalex և այլն)

Հայաստանի Հանրապետության իրավական տեղեկատվական համակարգերի ընդհանուր բնութագիրը:

Պաշտոնական էլեկտրոնային իրավական աղբյուրների նշանակությունը իրավաբանի գործունեությունում:

ARLIS իրավական տեղեկատվական համակարգ համակարգի կառուցվածքը և հնարավորությունները:

ARLIS-ում իրավական ակտերի որոնման մեթոդներ՝

- ըստ ակտի տեսակի,
- ըստ ընդունման ամսաթվի,
- ըստ իրավական նորմերի,
- ըստ հիմնաբառերի:

Դատական պրակտիկայի և իրավական մեկնաբանությունների որոնման առանձնահատկությունները:

Datalex դատական տեղեկատվական համակարգ համակարգի ուսումնասիրություն:

Էլեկտրոնային իրավական աղբյուրների առավելությունները և սահմանափակումները: Իրավաբանի կողմից իրավական տեղեկատվության գնահատման և հավաստիության ստուգման մեթոդները:

Թեմա 4. Դատական և պետական տեղեկատվական համակարգերի կիրառումը իրավաբանի գործունեությունում

Դատական տեղեկատվական համակարգերի դերը արդարադատության իրականացման գործընթացում:

Դատական ակտերի որոնման, ուսումնասիրության և վերլուծության մեթոդաբանություն:

Դատարանների պաշտոնական կայքերի օգտագործում: Դատական գործերի ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ստացում:

Սահմանադրական դատարանի, ընդհանուր իրավասության և վարչական դատարանների տեղեկատվական ռեսուրսները:

Պետական էլեկտրոնային ծառայությունների հարթակների կիրառումը իրավաբանի գործունեությունում՝

- էլեկտրոնային հարցումներ,
- պետական գրանցման համակարգեր,
- կադաստրային տեղեկատվական համակարգեր,
- պետական մարմինների էլեկտրոնային ծառայություններ:

Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և թվային ստորագրության կիրառումը իրավաբանական գործունեությունում:

Թեմա 5. Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաստեղծ, իրավակիրառ և հետազոտական գործունեությունում

Իրավաստեղծ գործունեության տեղեկատվական ապահովումը: Օրենսդրական գործընթացում տեղեկատվական համակարգերի կիրառումը:

Իրավական ակտերի նախագծման, համեմատական վերլուծության և իրավական փորձաքննության թվային գործիքներ:

Իրավակիրառ գործունեության տեղեկատվական հիմքերը: Իրավական փաստաթղթերի պատրաստման, պահպանման և մշակման էլեկտրոնային միջոցներ:

Իրավաբանական հետազոտությունների իրականացման տեղեկատվական մեթոդներ:

Գիտական և մասնագիտական իրավական տեղեկատվության որոնում, ընտրություն և գնահատում:

Էլեկտրոնային գրադարաններ և գիտական շտեմարաններ: Իրավական աղբյուրների վերլուծության թվային գործիքներ:

Թեմա 6. Արհեստական բանականությունը և ժամանակակից թվային գործիքները իրավաբանական գործունեությունում

Արհեստական բանականության հասկացությունը, զարգացման պատմությունը և հիմնական սկզբունքները:

Արհեստական բանականության կիրառման ուղղությունները իրավաբանական ոլորտում՝

- իրավական փաստաթղթերի վերլուծություն,
- իրավական տեղեկատվության որոնում,
- պայմանագրերի ուսումնասիրություն,
- դատական պրակտիկայի վերլուծություն,
- իրավական կանխատեսումներ:

Իրավաբանի աշխատանքում կիրառվող ժամանակակից թվային գործիքներ:

Արհեստական բանականության օգտագործման առավելություններն ու սահմանափակումները:

ԱԲ կիրառման ընթացքում առաջացող իրավական և էթիկական խնդիրներ՝

- տվյալների պաշտպանություն,
- պատասխանատվության հարցեր,
- մասնագիտական գաղտնիության պահպանում:

Թեմա 7. Տեղեկատվական անվտանգություն, կիբեռտարածք և տեղեկատվական հարաբերությունների իրավական պաշտպանություն

Տեղեկատվական անվտանգության հասկացությունը և հիմնական սկզբունքները:

Տեղեկատվական համակարգերի, տվյալների և տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության իրավական հիմքերը:

Կիբեռտարածքը որպես ժամանակակից իրավական հարաբերությունների միջավայր:

Կիբեռանվտանգության հիմնական սպառնալիքները՝

- չարտոնված մուտք,
- տվյալների ոչնչացում կամ փոփոխում,
- տեղեկատվության ապօրինի տարածում,
- կիբեռհանցագործություններ:

Անձնական տվյալների պաշտպանության իրավական հիմնահարցերը:

Անձի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունը տեղեկատվական սպառնալիքներից:

Ինտերնետում տեղեկատվական հարաբերությունների առանձնահատկությունները: Համացանցում տեղեկատվության տարածման, օգտագործման և վերահսկման իրավական խնդիրները:

Տեղեկատվական անվտանգության ոլորտում պետական քաղաքականության և միջազգային համագործակցության հիմնական ուղղությունները:

<u>Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար</u>

Հարցաշար՝

1. «Տեղեկատվության ազատության իրավունքը» սահմանադրական իրավունքի կարգավորման բնագավառը:
2. «Տեղեկատվության ազատության իրավունքը» սահմանադրական իրավունքի սահմանափակման հնարավորությունները, սահմանափակման համար հետապնդվող իրավաչափ նպատակները:
3. ՀՀ Սահմանադրական դատարանի կայքը՝ http://www.concourt.am
4. Դատական տեղեկատվական պորտալ. http://www.datalex.am
5. ՀՀ նախագահի կայքը՝ http://www.president.am
6. ՀՀ Ազգային ժողովի կայքը՝ http://www.parliament.am
7. ՀՀ իրավունքի կայք: http://www.gov.am
8. Իրավական Տեղեկատվական բազա http://www.arlis.am
9. Իրավական Տեղեկատվական բազա http://www.irtek.am
10. Տեղեկատվական բազա http://www.armlaw.am
11. Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ www.e-request.am
12. ՀՀ Կառավարության պետական ռեգիստր www.e-registr.am
13. քաղաքացիաիրավական փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային հարթակը՝ cabinet.armlex.am
14. վարչաիրավական փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային հարթակը՝ e-administrativecourt.am
15. քրեադատավարական փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային հարթակը՝e-criminal.am

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

Հիմնական գրականություն

1. **Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն** (փոփոխություններով և լրացումներով)։
2. **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք**։
3. **«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք**։
4. **«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենք**։
5. **«Կիբեռանվտանգության մասին» ՀՀ օրենսդրական ակտեր և ռազմավարական փաստաթղթեր**։
6. **ՀՀ իրավական տեղեկատվական համակարգեր**.
   - ARLIS՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի միասնական տեղեկատվական համակարգ,
   - Datalex՝ դատական ակտերի և դատական տեղեկատվության որոնման համակարգ,
   - ՀՀ դատարանների պաշտոնական տեղեկատվական հարթակներ։
7. **ՀՀ կառավարության թվայնացման և էլեկտրոնային կառավարման ոլորտի ռազմավարական փաստաթղթեր**։
8. Ավետիսյան Ա., **Տեղեկատվական իրավունք**, ուսումնական ձեռնարկ։
9. Մկրտչյան Ա., **Իրավական ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեությունում**, ուսումնական նյութեր։
10. Տեղեկատվական իրավունքի և թվային տեխնոլոգիաների իրավական կարգավորման վերաբերյալ գիտական հոդվածների ժողովածուներ։

Լրացուցիչ գրականություն

1. Бачило И.Л. **Информационное право**: учебник.
2. Рассолов М.М., Эриашвили Н.Д. **Информационное право**: учебное пособие.
3. Бачило И.Л. **Информационные технологии и право: проблемы правового регулирования**:
4. Калятин В.О. **Право в сфере интернета**:
5. Тедеев А.А. **Информационное право**:
6. Lessig L. **Code and Other Laws of Cyberspace**.
7. Floridi L. **The Philosophy of Information**.
8. Susskind R. **Online Courts and the Future of Justice**.
9. Susskind R., Susskind D. **The Future of the Professions: How Technology Will Transform the Work of Human Experts**.

10. Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության փաստաթղթեր՝ տեղեկատվության ազատության, անձնական տվյալների պաշտպանության և արհեստական բանականության իրավական կարգավորման վերաբերյալ։

Էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներ

1. ՀՀ իրավական տեղեկատվական համակարգ՝ ARLIS։
2. ՀՀ դատական տեղեկատվական համակարգ՝ Datalex։
3. ՀՀ Սահմանադրական դատարանի պաշտոնական կայք։
4. ՀՀ դատարանների պաշտոնական կայքեր։
5. Եվրոպական դատարանի վճիռների շտեմարան՝ HUDOC։
6. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական տեղեկատվական բազա։
7. Google Scholar գիտական որոնման համակարգ։
8. CyberLeninka գիտական էլեկտրոնային գրադարան։
9. Scimago Journal & Country Rank (SJR) գիտաչափական հարթակ։
10. ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և ԵՄ պաշտոնական իրավական տեղեկատվական աղբյուրներ։